

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ

«Կապան» մասնաճյուղի Դրամարկղային գործառնությունների հաշվառման մասնագետ
Լրիվ աշխատաժամանակ
անորոշ ժամկետով
ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՐԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Կապան» մասնաճյուղի Դրամարկղային գործառնությունների հաշվառման մասնագետի պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառնությունները ներառում են դրամարկղային գործառնությունների ժամանակին և պատշաճ կատարումը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Դրամարկղային գործառնությունների իրականացում, կանխիկ արժույթի, արտարժույթի և այլ արժեքների ընդունում և տրամադրում /կանխիկ ելք, մուտք/,
- Կանխիկ արժույթի առքի ու վաճառքի իրականացում, համապատասխան օրդերների ձևակերպում,
- Դրամարկղային գործառնությունների հետ կապված հաշվեկշռային գործառնությունների ձևակերպում,
- Մասնաճյուղի կողմից իրականացված եկամտային և ծախսային օրդերների սպասարկում,
- Կանխիկ դրամական միջոցների ինկասացիա,
- Ինկասացիոն կազմակերպության կողմից դրամական միջոցների ընդունման և հանձնման ակտերի պատրաստում,
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթությունը ցանկալի է,
- տվյալ պաշտոնում աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ,
- հաշվեկշռային հաշիվների, փաստաթղթաշրջանառության կազմակերպման և սկզբնական փաստաթղթերի հիման վրա դրանց ձևակերպման ու պահպանման իմացություն,
- բարձր կազմակերպվածություն, մանրամասների նկատմամբ ուշադրություն,
- ճշգրիտ և արագ մուտքագրելու հմտություն և լայնածավալ տվյալների մուտքագրման կարողություն,
- սահմանված ժամկետներում աշխատանքն ավարտելու ունակություն,
- մարդկանց հետ հաղորդակցվելու հմտություններ:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, 3304, Ա.Մանուկյան 1/51 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻՉԲԸ՝
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

06 օգոստոսի 2018
20 օգոստոսի 2018